«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Բարոյական արժեքներ

Առարկան՝ Կերպարվեստ

Հետազոտող ուսուցիչ՝ Շահվերդյան Կալենց

Ուսումնական հաստատություն՝ Ք. Աբովյան, № 2 հիմնական դպրոց

Երևան 2022
Բովանդակություն

- **Ներածություն**
- **Հետազոտության հարց**
- **Հետազոտության թեմա**
- **Հետազոտության խնդիր**
- **Հիմնական մաս**
- **Եզրակացություն**
- **Հավելում**
- **Գրականության ցանկ**

Ներածություն

Բարոյական արժեքներ ասելով հասկանում ենք այն վեհ գաղափարները, որոնք ապահովում են մարդու բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը: Բարոյական արժեքները ինքնին շատ սուբեկտիվ են և մի արժեքի առկայությունը ինքնին ի զորու չէ արժեզրկել մեկ այլ արժեքի կարևորությանը՝ մյուսի հետ համեմատական վիճակում գտնվելիս: Եթե մենք դիտարկենք բարոյական արժեքները կերպարվեստում ապա կնկատենք, որ քննարկման հարցը դարձած շատ ավելի բարդ և բազմաշերտ է:
Այս ավարտական աշխատանքի շրջանակներում հեղինակը քննարկել է կերպարվեստի զարգացումը և վերջինիս բարոյական արժեքների փոփոխությունը ինչպես նաև կարելի է նկատել իմ կարծիքը այս կամ այն ժամանակահատվածի ընթացքում առկա բարոյական արժեքների մասին:
Բարոյական արժեքները դրանք գաղափարներ և համոզմունքներ են, որոնք մարդիկ ունենում են այն մասին, թե ինչ վարք է ճիշտ, և ինչ վարք է սխալ: Վերջինս ինքնին թույլ է տալիս մեզ մտածել, որ ինչպես առհասարակ կյանքի օջախներում այնպես ել արվեստի և նկարչության մեջ առկա են մի շարք բարոյական արժեքներ:
Ասում են, որ մարդն ունի բարոյական արժեքներ, երբ ունի սովորույթներ և նորմեր, որոնք համարվում են դրական և լավ ուրիշների բարեկեցության համար, իսկ այս տեղից կարելի է ևս մեկ ճշմարտացի ենթադրություն անել՝ մարդիկ ստեղծում են կոալիցսներ հաշվի առնելով իրենց սովորույթները և նորմերը ուստի բնական է նաև այն հանգամանքը, որ տարբեր են նաև տարբեր կոալիցաներում գործող արվեստագետների բարոյական արժեքների մասին առկա գաղափարները և հենց ինքնին արժեքային համակարգերը: Այնուամենայնիվ չնայած այս վերջին հանգամանքին մի արվեստագետի բարոյական արժեքների մասնավոր և ոչ ստանդարտ պատկերացումը ընդունակ չէ մյուս արվեստագետի բարոյական արժեքները արժեզրկելու և վերջինս ոչնչացնելու: Բարոյական արժեքները ինչպես մարդկանց ապրելակերպի, այդպես ել արվեստի հիմք են կազմում և դա չի կարող չգրգռել այս ավարտական հետազոտական աշխատանքն ընթերցողի հետաքրքրասիրությունը:
Մարդկանց պատկերացումները աշխարհի, գեղեցկության ու իրենց մասին անընդհատ փոխվում են: Արվեստի մարդիկ հատկապես ուժեղ են զգում այդ փոփոխություններն ու փորձում դրանք հնարավորինս լիարժեք արտահայտել իրենց համար մատչելի բոլոր միջոցներով:

Հետազոտության հարցերը

---

1. Ինքնուրյուն ուսումնասիրել բարոյական արժեքները կերպարվեստում ըստ ժամանակահատվածների:

2. Բերել օրինակներ:

3. Ինքնուրյուն անցկացնել համեմատականներ:

Հետազոտության թեմա

Հետազոտության թեման բարոյական արժեքներն են արվեստում:
Հեղինակը ավարտական աշխատանքի ուղղությունը ընտրել է կերպարվեստը և դիտարկել է կերպարվեստում առկա բարոյական արժեքների հիմքը, վերջիններիս փոփոխությունը ըստ ժամանակահատվածների և որոշ համեմատական կապեր:

Հետազոտության խնդիր

Ինքնուրյուն փնտրել և գտնել փաստեր ու տվյալներ հետազոտական աշխատանքը հետաքրքիր, հակիրճ և որքան հնարավոր է ինֆորմալից դարձնելու համար: Առավելագույնս մեջբերել հեղինակներին և նրանց աշխատանքները: Ինչպես նաև ավարտական հետազոտական աշխատանքի խնդրի մեջ է մտնում գալ արժանի եզրակացության այս աշխատանքի վերջում:

Հիմնական մաս

Առաջին պեղումներ

Մսկսել են կերպարվեստով զբաղվել դեռևս 36.000 տարի առաջ և հենց այդքան տարեկան է Ծավեյի քարանձավումհայտնաբերված կենդանիների նկարները: Այն Ֆրանսիայում է, որտեղ ապրում էին մեր դարավոր նախնիները: Այս պարագայում հեղինակի բարոյական արժեքը բավականին պարզ է՝ նա նկարում էր կենդանիները որպիսի որսար կենդանիների կամ նկարում էր այն ինչ տեսնում էր:

Հին Եգիպտոս

Հին Եգիպտոսում արժեքների վերաբերյալ կողմնորոշումը մի փոքր այլ էր մասնավորապես կերպարվեստի ասպարեզում, քանզի այս ոլորտում Հին Եգիպտացիները գերակշիռ մեծամասամբ ուշադրություն էին դարձնում կյանքին մահից հետո:
Կերպարվեստը այս ժամանակահատվածում արվում էր մահացածների համար և մատուցողների համար: Կերպարվեստի հետ կապված բոլոր լուծումները այս ընթացքումկամա թե ակամա տանում էին մահ և դա գտնվում էր ավելի քան բարոյական արժեքների սահմանում, քանզի Հին Եգիպտացիներըսա անում էին մահից հետո այն աշխարհում ավելի ճիշտ կողմնորոշվելու համար:



Հին Հունաստան

Սա այն վայրն էր և ժամանակահատվածն երբ արվեստի բարոյական արժեքների համակարգում տեղ գտավ մարդկային մարմնի մանրամասն ուսումնասիրումը և դիտարկումը:

Հենց այս ժամանակահատվածում է կառուցվել մի շարք ճարտարապետական գլուխգործոցներ, քանդակներ իսկ ինչ վերաբերվում է նկարներին ապա վերջիններս համարա թե չկան, սական նկարների փոխարեն առկա են մեծքանակությամբծաղկամաններպատկերվածնկարներով, որոնքունենտարբերբովանդակություն:

Միջնադար

Միանգամից կարելի է նշել այն հանգամանքը, որ միջնադար ասելով մենք հասկանում ենք մոտավորապես 1.000 տարի ընդգրկող ժամանակահատված և հենց այս ընթացքում ստեղծվել են մեծ քանակությամբտեխնիկաներ և ոճեր որոնք իրենց տեղն են գտել կերպարվեստում, բայց չնայած այսբոլոր հանգամանքներին միջնադարում տեղի ունեցավ մի շատ կարևոր իրադարձություն որը նաև կերպարվեստի ամբողջ ուշադրությունը սևեռեց իր վրա և դա Քրիստոնեությունն էր, ամենատարածված կրոնը,բարոյական արժեքների հիմքը:Կերպարվեստում բարոյական արժեքներին հետևում էին այսպես, որ համապատասխան լինի քրիստոնեական բարոյական արժեքներին և դա բնական էր:
Նկարիչները մտածում էին այսպես՝ նկարել իրականությունը այնպես ինչպես որ է, դա նշանակում է նկարել պատրանքներ, աչքաթող անել վեհը և համաձայն միջնադարի մասին քրիստոնեական պատկերացումներին նկարել առօրյան դա բարոյական արժեքների խեղաթյուրում է:

Եվ այսպիսով բարոյական արժեքները ստիպում էին հեղինակներին խուսափել «իրականության մասին պատրանքներից» և առաջնորդվել ըստ բարոյական արժեքների՝ նկարելորբապատկերներ:

Վերածնունդ

Իսկ այս դարի ժամանակահաբվածում նկարիչները արդեն սկսեցին փոքրիշատե մոռանալ Քրիստոնեական բարոյական արժեքները և իրենց ուշադրությունը հրավիրեցին Հին Հունաստանում և Հին Հռոմում ստեղծված արվեստի գլուխգործոցներին:
14-րդ դարում նկարիչները սկսեցին ոչ միայն գննել և սովորել Հին Հռոմում և Հին Հունաստանում ստեղծված արվեստի գլուխգործոցները այլ նաևվերածնունդ ապահովեցինայն ամենի համար ինչ մոռացվել էր Միջնադարում, ուսի այդ իսկ պատճառով այս դարաշրջանը կոչվեց Վերածննդի դարաշրջան: Նկարչությունը հասավ նոր մակարդակի և հեղինակները սկսեցին առաջնորդվել այլ արժեքներովիդեպս այդ արժեքները որօես այդպիսին շատ տարբեր էին միջնադարում առկա արժեքներից:
Իսկ Վերածննդի արժեքային համակարգն էր մանրամասներին և դետալների ուշադրություն դարձնելը, մարդկային անատոմիան ուսումնասիրել և վերջինիս հիման վրա կերպարվեստում քայլեր անելը, նկարներում ներկայացնել պատկերները առավելագույնս իրատեսական:
Եվ այսպիսի ճշտությունը այս ընթացքի բարոյական արժեքներն էին ու այսպիսի բարոյական արժեքների շնորհիվ իրենց փառքն են ձեռք բերում այնպիսի հեղինակներ ինչպիսիք են Միքելանջելոն, Դավինչին և այլն:

Ռոմանտիզմ

18-րդ դարի վերջերը ընկած ժամանակահատվածում բարոյական արժեքները իրենց ուղղությունը Վերածննդի կլասիկ պատկերներից փոխեցին դեպի էմոցիաներ, դեպի երևակայություն և այս ամենը հիմք դարձավ Ռոմանտիզմի ծննդի համար:

Այս ընթացքում նկարիչները պատկերում էին պատերազմի տեսարաններ, բնություն իդեպս բնությունը կերպարվեստում առհասարակ սկսեց գոյություն ունենալ միայն 18-րդ դարի վերջերին:
Այնպիսի նկարիչներ ինչպիսիք են Տյորնռրը և Կանստեյբլը ապացուցեցին, որ բնության պատկերները արժանի են կերպարվեստում լինելու համար և բարոյական է այն նույնիսկ համարել առանձին ժանր:

Էպրեսանիզմ

19-րդ դարի կեսերին ընկած ժամանակահատվածում արդեն ակնհայտ էի, որ նկարիչները ընդունակ են հանձնել իրականությունը թղթին այնպես ինչպես որ է, բայց մեկ այլ հարց արդյոք մենք ճիշտ ենք ընկալում իրականությունը և այդպես ծնվեց էպրեսանրզմը:
Այս ընթացքում քիչ էին ուշադրություն դարձնում մանրուքներին, նկարում էին առօրյա կյանքը և արտահայտում էիր լույսի սուբեկտիվ պատկերացումը:
Այս ժամանակահատվածի կառկառուն դեմքերից են Մոնեն, Մանեն, Մանուառն և այլք:
Հենց այս ժամանակահատվածում է, որ կերպարվեստում ինովացաները և



էքստերիմենտները կտրուկ աճ է ապրում, քանզի այս էտապի բարոյական արժեքները նկարիչներին թույլ են տալիս լինել ավելի ազատ ի տարբերություն այլ ժամանակահատվածների: Էպրեսանիզմի հեղինակավոր դեմքեր են Վան Գոգը, Մունկը, Մատիսը և այլոք:

Կուբիզմ

Կուպիզմը շատ ավելի հետաքրքիր ժամանակահատված էր և աչքի է ընկնում իր բարոյական արժեքների սուբեկտիվությամբ:
Այս ընթացքում դեռևս նկարում էին շրջակա աշխարհը, բայց երկրաչափական պատկերներով: Կառկառուն դեմքերի է Պիկասոն:

Աբստրակտ

Վերջինս իր բարոյական արժեքների համակարգով ունի ընդհանրություններ Կուպիզմի հետ (այդ կարծիքի են մի շարք հետազոտողներ), բայց Կուպիզմում դեռ պատկերում էին շրջակա աշխարհը ինչը բացարձակապես առկա չէ Աբստրակտ կերպարվեստի մեջ և նույնիսկ վերջինս իր համարձակությամբ գտնվում է բարոյական արժեքների սահմանում:
Նկարիչների համար գույները նոտաներ էին, որոնց կարելի է տալ այն տեսքը, որը ցանկանում է զգալ և տեսնել հեղինակը, նրանց աշխատանքները առհասարակ կապ չունեին իրական աշխարհի հետ:
Աբստրակցիայի դեմքերից է Կոնդինսկին:

Սուպրեմատիզմ

Աբստրակցիայի հետքը ունի տրամաբանական շարունակությունն:
Մակեվիչը առաջարկեց նկարել այնպիսի երևույթներ, որոնք առհասարակ ոչ մի ասոցիացա չեն ստեղծում շրջակա աշխարհի և իրականության հետ:
Մալևիչը առհասարակ հայտարարեց ավանդական կերպարվեստի վերջը իր ստեղծագործություններով է հավատացեք նույնիսկ դա այդ ընթացքի բարոյական արժեքների շրջանակում էր և կոչվում էր այս ոճը սուպրեմատիզմ:



Սյուրալիզմ

Բնական էր այն հանգամանքն, որ սև շրջանակները երկար չէին մնա քանզի մարդիկ ուզում էին գոնե ինչ որ մի բան տեսնել և բեմ է դուրս գալիս սյուրալիզմը, որը ենթագիտակցության արտացոլումն էր:
Սյուրալիզմի կառկառուն դեմքերից են Սալվադոր Դալին, Կամպանիան, Ռենե Մագրիդն և նրանք նկարում էին երազներ, պարադոքսալ երևույթներ, զալուցինացաներ և այդ ամենը այնպես որ լինի իրականամոտ: Այս ամենը հիյասքանչ էր իր հետաքրքրությամբ և բարոյական արժեքներով:

Աբստրակտ էքսպրեսանիզմը

Ահա և 20-րդ դարի կեսերին են՝ Եվրոպան ջանում է ուշքի գալ պատերազմից իսկ Ամերիկայում զարգանում էր Աբստրակտ Էքսպրեսանիզմը:
Սա ցույց էր տալիս հեղինակի ներքին աշխարհը այն գույներով, որով պատահականության սկզբունքով ներկում էին:

Պոպ Արտ

Միանգամից այս ժամանակահատվածի հետո Էնդի Վորխերը առաջարկեց վերադառնալ ավելի իրականամոտ և հասկանալի կերպարվեստի և բեմահարթակ հրավիրեց այն նկարչությանը, որը պատկերում է կոմիքսներ:
Իդեպս կոմիքսներ առկայությունը չխանգարեց կերպարվեստի այլ ժանրերին:

Եզրակացություն

Այս ավարտական հետազոտական աշխատանքից կարելի է մի շարք եզրակացություններ անել.

- Բարոյական արժեքները կերպարվեստում սուբեկտիվ են:
- Բարոյական արժեքները ենթակա են փոփոխությունների:
- Ժամանակահատվածի հետ մեկտեղ բարոյական արժեքները փոփոխվում են:
- Արտաքին հանգամանքները և իրադարձությունները իրենց ուղղիղ ներազդեցությունն են ունենում կերպարվեստում առկա բարոյական արժեքների վրա:
- Արվեստագետները բարոյական արժեքների կանոնները ընդունելով միայն կարող են գործունեություն սկսել և ճանաչում ունենալ տվյալ ժամանակահատվալում:
- Բարոյական արժեքները հավերժ չեն կերպարվեստում, բայց հավերժ են տվյալ ժամանակահատվածի բարոյական արժեքների հիման վրա ստեղծված գլուխգործոցները:
- Բարոյական արժեքները կերպարվեստում միշտ եղել են, կան և կլինեն, բայց թե ինչպիսին կլինեն այդ բարոյական արժեքները թելադրում են մի շարք հանգամանքներ այլ հանգանանքներ:
- Կերպարվեստուն բրոյական արժեքները թելադրողներ են՝

    1. Մարդկային ցանկությունները, նպատակները,
    2. Կրոնը,
    3. Հասարակությունը,

4. Պարզությունը,
5. Բարդությունը,
6. Զգացմունքները,
7. Հետազոտությունները,
8. Արվեստագետները,

- Բարոյական արժեքները, որոնք ծնում են արվեստ միշտ յուրատիպ են և վեհ իրենք իրենցով:
- Բարոյական արժեքները կերպարվեստում ծնում է նոր և ամբողջովին ինքնատիպ ժանրեր, որոնք նման չեն մեկը մյուդին:
- Ներկա կերպարվեստում բարոյական արժեքների ստեղծած ոճերը նման չեն միմիյանց և մեկի ինքնատիպությունը չի արժեզրկում մյուսին:
- Մարդիկ հիմա ավելի քան ազատ են կերպարվեստում իրենց ոճի ձևավորման և ընտրության մեջ ինչը բարոյական արժեքների բազմազան լինելու շնորհիվ է:

Հավելում

Որպես հավելում անհրաժեշտ է նշել, որ հիմա կերպարվեստում առկա են բոլոր հնարավորժանրերը և վերջիններս զարգանում և գործում են ինչպես հարկն է:
Եվ միյանշանակ հայտնի է նաև այն գաղափարը, որ բարոյական արժեքները հանդիսացել և հանդիսանում են կերպարվեստում սահմանագծերը, որոնց շրջանակներում գործել և զարգացել է կերպարվեստը:
Այս ամենի հետ մեկտեղ բարոյական արժեքներին կարելի է համարել նաև ուղղորդիչ պայման, որի համաձայն կերպարվեստում քայլեր են արվել:
Փոփոխությունը և ճկունությունը ուզած թե չուզած զարգացման նախապայմաններից է և շատ կարևոր է, որ բարոյական արժեքները կերպարվեստում և՛ փոփոխական են, և՛ ճկուն ու այս նախապայմանները հիմք են դարձել կերպարվեստի ճկուն և փոփոխական լինելու համար:

Գրականության ցանկ

- Կերպարվեստ առարկ:
- Կերպարվեստ – Վիքիբառարան:
- Համաշխարհային պատմություն: